ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՕՐԱԳՐԻ

Կառավարութենից թոյլատրված նոր պրոգրամով, այս 1874 թուի Ապրիլ ամսից, պիտի հրատարակվի նորէն Մանկավարժական և Կրօնական Օրագիր Հայկական Աշխարհ, որ դադարեց 1871 թ. Մայիսին, Խմբագրողի Թիֆլիս թողնելու և Էջմիածին գնալու պատճառով։ Հայկական Աշխարհի նպատակը կլինի — կրօնական ընթերցասիրութիւն տարածել Հայազն հասարակութեան մէջ, ազգային դպրոցների առաջադիմութեանը և մանուկների կրթութեանը նպաստել իւրովսանն, նոր Հայկական լեզուի մշակութեանը առանձին ուշք դարձնելով։

Հայկական Աշխարհ կբովանդակէ.

1. Մանկավարժական ընտիր յօդուածներ, մանկավարժութեան ներկայ դրութեան և զարգացման տեղեկութիւններով, զանազան լուսաւորված աշխարհների մէջ։

2. Օրիորդներին և պատանեակներին օգտաւէտ ընթերցանութեան համար գրվածներ պատմական, բնագիտական, կենսագրական, ճանապարհորդական, առողջապահական և այլն։

3. Կրօնական գրուածներ, Քարոզներ, Ս. գրքից թարգմանութիւններ աշխարհաբար լեզուով։

4. Աշխարհաբար լեզուի կանոնների և ոճերի քննութիւններ։

5. Մանկավարժական և դպրոցական գրվածների քննութիւն։

Հոգևորականների և հոգևոր դպրոցների մասին տեղեկութիւններ։ Մատենագրական տեղեկութիւններ։ Զանազան մանր լուրեր։

Հայկական Աշխարհ կհրատարակվի ամիսը մի անգամ, իւրաքանչիւր տետրակը 2 թերթից կազմված, գուցէ երբեմն աւելի ևս։ Այս տարի թէպէտ սկսում ենք Ապրիլից, սակայն տարեկան թերթերի քանակութիւնը (24—30) ամբողջութեամբ կներկայացնենք բաժանորդներին։

Տարեկան գինը 5 (հինգ) մանէթ է, կանխիկ վճարելի։